

ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ

և

ԿԱՆԱԶ ԿԼԻՄԱՅԻ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ

միջև

Հայաստանի Հանրապետության Կառավարությունը (Կառավարություն) և Կանաչ կլիմայի հիմնադրամը (Հիմնադրամ), երկուսը միասին այսուհետև՝ Կողմեր

հիմնվելով Միավորված ազգերի կազմակերպության Կլիմայի փոփոխության մասին շրջանակային կոնվենցիայի վրա, որն ընդունվել է 1992թ. մայիսի 9-ին (Կոնվենցիա) և Կանաչ կլիմայի հիմնադրամի կառավարման գործիքին (Կառավարման գործիք), և

գիտակցելով Հիմնադրամին և Հիմնադրամի հետ կապակցված անձանց Կառավարման գործիքի 7-րդ և 8-րդ պարբերություններին համապատասխան արտոնություններով և անձեռնմխելիությամբ ապահովելու կարևորությունը,

գիտակցելով Հայաստանի Հանրապետությունում Հիմնադրամի գործունեության արդյունավետ իրականացումն ապահովելու անհրաժեշտությունը,

**համաձայնեցին հետևյալի մասին.**

### **Հոդված 1 Շրջանակը**

Սույն Հիմնական Համաձայնագիրը սահմանում է Հայաստանի Հանրապետությունում Հիմնադրամի կարգավիճակը և Հիմնադրամի հետ կապակցված անձանց կարգավիճակը: Այն պետք է կիրառվի ցանկացած գործունեության նկատմամբ, որը Հիմնադրամը կարող է ծավալել Հայաստանի Հանրապետությունում: Կողմերը կարող են կնքել լրացուցիչ համաձայնագրեր նման գործունեության և նախագծերի (այսուհետև՝ Ծրագրային փաստաթուղթ) հատկորոշիչները սահմանելու վերաբերյալ: Ցանկացած նման Ծրագրային փաստաթուղթ, որը կնքվում է սույն Հիմնական Համաձայնագրի ներքո, չի կարող Կառավարության և Հիմնադրամի համար առաջացնել միջազգային իրավունքի ներքո այլ պարտավորություններ և չի կարող հակասել սույն Հիմնական Համաձայնագրի ժամկետներին և պայմաններին:

## Հոդված 2 Սահմանումները

Սույն Հիմնական Համաձայնագրի նպատակներով կիրառվում են հետևյալ սահմանումները՝

(a) «Հաշվետվության ստորաբաժանումներ» նշանակում է գնահատման ստորաբաժանում, ամբողջական ստորաբաժանում և վերականգնման մեխանիզմ, որը ստեղծվել է Խորհրդի կողմից՝ համաձայն Կառավարման գործիքի,

(b) «Հիմնադրամի արխիվներ» նշանակում է Հիմնադրամին պատկանող կամ նրա կողմից պահվող թվայնացված (մեքենայաընթեռնելի) կամ այլ ձևով բոլոր գրառումները, նամակագրությունը, փաստաթղթերը, ձեռագրերը, անշարժ և շարժական նկարները, կինոժապավենները, ձայնագրությունները, համակարգչային կամ ցանցային տվյալները և այլ թվային և էլեկտրոնային գրառումները կամ տվյալների կամ այլ նյութերի ամփոփումները,

(c) «Խորհուրդ» նշանակում է հիմնադրամի խորհուրդը,

(d) «Մաքսային տուրքեր» նշանակում է Հիմնադրամի կողմից պաշտոնական նպատակներով ներմուծվող կամ արտահանվող ապրանքների, այդ թվում՝ տրանսպորտային միջոցների, սարքավորումների, նյութերի և պարագաների վրա կիրառվող ցանկացած տուրքերը, հարկերը կամ գանձումները,

(e) «Տուրք» նշանակում է պաշտոնական նպատակներով գնվող ապրանքների և ծառայությունների վրա կիրառվող ցանկացած ակցիզային հարկը կամ այլ գանձումները,

(f) «Գործադիր տնօրեն» նշանակում է Խորհրդի կողմից նշանակված քարտուղարության ղեկավարը,

(g) «Հիմնադրամի համար առաքելություններ իրականացնող փորձագետ» նշանակում է Հիմնադրամի հետ պայմանագրային (կամ փորձագետի և Հիմնադրամի միջև կամ որևէ կազմակերպության և Հիմնադրամի միջև) հարաբերությունների շրջանակում ծառայություններ մատուցող փորձագետը կամ խորհրդատուն, ներառյալ՝ հաշվետվության ստորաբաժանումների և խորհրդի հանձնաժողովների, մասնագիտական և աշխատանքային խմբերի անդամները,

(h) «Դիտորդներ» նշանակում է Խորհրդի նիստերին մասնակցելու համար հրավիրված ակտիվ դիտորդները և դիտորդի կողմից նշանակված ցանկացած ներկայացուցիչ, որը հավատարմագրվել է Հիմնադրամի կողմից,

(i) «Պաշտոնյաներ» նշանակում է Խորհրդի անդամները և փոխարինող անդամները և նրանց խորհրդականները, Գործադիր տնօրենը, Քարտուղարության աշխատակազմը և Հիմնադրամի ցանկացած այլ պաշտոնատար անձը և աշխատակիցը, ներառյալ՝ Հաշվետվության ստորաբաժանումների անձնակազմը՝ անկախ նրանց քաղաքացիությունից, բացառությամբ տեղում հավաքագրված և ժամավճարով աշխատող անձանց,

(j) «Հիմնադրամի գույք» նշանակում է Հիմնադրամին պատկանող կամ նրա կողմից տնօրինվող կամ կառավարվող ակտիվները, միջոցները, եկամուտները և իրավունքները,

(k) «Քարտուղարություն» նշանակում է Կառավարման գործիքի համաձայն՝ Հիմնադրամի կողմից ստեղծված Հիմնադրամի քարտուղարությունը, և

(l) «Հարկ» նշանակում է ցանկացած ուղղակի կամ անուղղակի հարկերը, ներառյալ՝ ցանկացած ավելացված արժեքի հարկը և/կամ այլ նմանատիպ հարկերը:

### **Հոդված 3**

#### **Իրավական կարգավիճակը**

1. Հիմնադրամն ունի լիարժեք իրավաբանական անձի կարգավիճակ և, մասնավորապես, իրավասու է.

- (a) կնքել պայմանագիր,
- (b) ձեռք բերել և տնօրինել անշարժ և շարժական գույք, և
- (c) հանդես գալ դատարանում:

2. Հիմնադրամի տարածքներն անձեռնմխելի են: Կառավարությունը պետք է ապահովի տարածքների պահպանությունը և այդ տարածքների համար հանրային ծառայությունների տրամադրումը:

### **Հոդված 4**

#### **Իրավական գործընթացներից անձեռնմխելիությունը**

1. Հիմնադրամն օգտվում է ցանկացած տեսակի իրավական գործընթացի անձեռնմխելիությունից, բացառությամբ այն դեպքերի, որոնք ծագում են կամ կապված են իր լիազորություններն իրականացնելիս փոխառված գումարների, պարտավորությունների դիմաց երաշխիք տրամադրելու կամ գնման և վաճառքի

կամ արժեթղթերի վաճառքի երաշխավորման հետ, որոնց դեպքում Հիմնադրամի դեմ կարող է դատական հայց հարուցվել այն երկրի տարածքում գտնվող իրավասու դատարանում, որտեղ հիմնադրամը գլխավոր գրասենյակ կամ մասնաճյուղ ունի, կամ որտեղ հիմնադրամը գործակալ է նշանակել դատական փաստաթղթեր կամ գործընթացի ծանուցագիր ընդունելու նպատակով կամ արժեթղթեր է թողարկել կամ դրանք երաշխավորել:

2. Չնայած սույն հոդվածի 1-ին կետի դրույթների՝ Կառավարության կամ Հայաստանի Հանրապետության որևէ գործակալության կամ մարմնի կողմից կամ Հայաստանի Հանրապետության կամ Հայաստանի Հանրապետության որևէ գործակալության կամ մարմնի անունից ուղղակիորեն կամ անուղղակիորեն հանդես եկող կամ վերջինիս պահանջը ներկայացնող որևէ իրավաբանական կամ ֆիզիկական անձի կողմից Հիմնադրամի դեմ չի կարող որևէ հայց հարուցվել:

3. Մինչև Հիմնադրամի նկատմամբ վերջնական դատական ակտի կայացնելը, Հիմնադրամի գույքի և տարածքի վրա, անկախ դրանց գտնվելու վայրից և դրանք տնօրինողից, չի կարող որևէ տեսակի բռնագրավում, զննություն, կալանք, արգելանք կամ հարկադիր կատարում կիրառվել:

#### **Հոդված 5**

#### **Ակտիվների անձեռնմխելիությունը**

Հիմնադրամի գույքն ու ակտիվները անկախ գտնվելու վայրից և տնօրինողից, անձեռնմխելի են գործադիր կամ օրենսդիր գործունեությամբ սահմանված հետախուզման, արգելանքի, առգրավման, բռնագանձման, կամ որևէ այլ տեսակի պահանջագրի և իրավազրկման գործողություններից:

#### **Հոդված 6**

#### **Արխիվների անձեռնմխելիությունը**

Հիմնադրամին պատկանող կամ նրա մոտ պահվող արխիվները և, ընդհանրապես, բոլոր փաստաթղթերը և տվյալները, ինչ տարբերակով էլ դրանք կազմված լինեն, այդ թվում՝ էլեկտրոնային ձևով, անձեռնմխելի են անկախ դրանց գտնվելու վայրից:

## **Հոդված 7**

### **Ակտիվները սահմանափակումներից զերծ պահելը**

1. Հիմնադրամի նպատակները և գործառույթներն անհրաժեշտ շրջանակներում արդյունավետ իրականացնելու համար և սույն Հիմնական Համաձայնագրի և Հայաստանի Հանրապետության օրենքների ու կարգավորումների համաձայն, Հիմնադրամի ողջ գույքն ու ակտիվները զերծ են ցանկացած բնույթի սահմանափակումներից, կարգավորումից, վերահսկողությունից և մորատորիումից:

2. Հայաստանի Հանրապետության օրենքների ու կարգավորումների համաձայն Հիմնադրամը, սահմանափակված չլինելով որևէ ֆինանսական վերահսկողությամբ, կարգավորմամբ կամ մորատորիումով,

(a) կարող է ունենալ միջոցներ, ոսկի կամ ցանկացած արտարժույթ և վարել հաշիվներ ցանկացած արտարժույթով, և

(b) կարող է ազատորեն փոխանցել իր միջոցները, ոսկին կամ արտարժույթը մեկ երկրից մյուսը կամ ցանկացած երկրի ներսում, և փոխանակել իր ցանկացած փոխարկելի արտարժույթը ցանկացած այլ փոխարկելի արտարժույթով:

3. Սույն հոդվածի 1-ին կետով նախատեսված իր իրավունքներն իրականացնելիս Հիմնադրամը պատշաճ վերաբերմունք է ցուցաբերում Կառավարության կողմից բերված ցանկացած պահանջին այնքանով, որքանով այդ պահանջին ընթացք տալը չի համարվում, որ վնասում է Հիմնադրամի շահերին:

## **Հոդված 8**

### **Հաղորդակցության արտոնությունները**

Հիմնադրամի պաշտոնական հաղորդակցության նկատմամբ պետք է ցուցաբերվի ոչ պակաս բարյացակամ վերաբերմունք, քան Հայաստանի Հանրապետությունում ներկա միջազգային կազմակերպությունների պաշտոնական հաղորդակցության նկատմամբ ցուցաբերվող վերաբերմունքը:

## Հոդված 9

### Հիմնադրամի պաշտոնյաների անձեռնմխելիությունը և արտոնությունները

1. Հիմնադրամի համար առաքելություն իրականացնող պաշտոնյաներն ու փորձագետները.

(a) իրենց պաշտոնական գործառույթների իրականացման ընթացքում օգտվում են իրենց կատարած գործողությունների համար իրավական գործընթացների անձեռնմխելիությունից, բացառությամբ այն դեպքերի, երբ Հիմնադրամը հրաժարվում է անձեռնմխելիությունից.

(b) եթե նրանք Հայաստանի Հանրապետության քաղաքացիներ չեն, օգտվում են ներգաղթի պահանջների, օտարերկրացիների գրանցման պահանջների և պետական պարտավորությունների առումով նույն վերաբերմունքից և փոխանակման կարգավորումների նույն մեխանիզմներից, ինչպիսիք Կառավարությունը ցուցաբերում է այլ միջազգային կազմակերպությունների համանման աստիճան ունեցող ներկայացուցիչներին, պաշտոնյաներին և աշխատակիցներին, և

(c) ճամփորդության դյուրացման առումով օգտվում են նույն վերաբերմունքից, ինչպիսին Կառավարությունը ցուցաբերում է այլ միջազգային կազմակերպությունների համապատասխան աստիճան ունեցող ներկայացուցիչներին, պաշտոնյաներին և աշխատակիցներին:

2. Ի լրումն սույն հոդվածի 1-ին կետում նշված դրույթների, Խորհրդի անդամները և փոխարինող անդամները և Գործադիր տնօրենն իրենց գործառույթներն իրականացնելիս և դեպի Հայաստանի Հանրապետություն և Հայաստանի Հանրապետությունից ճամփորդության ընթացքում օգտվում են ձերբակալման կամ կալանավորման և անձնական ուղեբեռի բռնագրավման անձեռնմխելիությունից:

3. Սույն հոդվածի 1-ին կետում չընդգրկված դիտորդները և անհատները, որոնք Հիմնադրամի կողմից հրավիրվել են մասնակցելու գիտաժողովներին և հանդիպումներին, հանդես գալով որպես Հիմնադրամի կողմից հրավիրյալներ, իրենց բանավոր կամ գրավոր խոսքի, ինչպես նաև կատարված բոլոր գործողությունների առումով օգտվում են ցանկացած տեսակի իրավական գործընթացի անձեռնմխելիությունից:

## Հոդված 10

### Ճամփորդության դյուրացումը և ճամփորդական փաստաթղթի ճանաչումը

1. Կառավարությունը դյուրացնում է Հիմնադրամի համար առաքելություն իրականացնող Պաշտոնյաների և փորձագետների տեղաշարժը, ներառյալ մուտքի վիզայի համար դիմումներին արագ ընթացք տալու միջոցով, երբ պահանջվում է մուտքի վիզա և Հայաստանի Հանրապետության օրենքներով ու կարգավորումներով թույլատրելի սահմաններում:

2. Կառավարությունը դյուրացնում է Հիմնադրամի կազմակերպած հանդիպումներին ու համաժողովներին մասնակցելու համար Հիմնադրամի կողմից հրավիրված դիտորդների և այլ անձանց մուտքի վիզայի համար դիմելու ընթացակարգը, երբ պահանջվում է մուտքի վիզա և Հայաստանի Հանրապետության օրենքների ու կարգավորումների թույլատրելի սահմաններում:

3. Կառավարությունը ճանաչում է Հիմնադրամի պաշտոնյաների կողմից Միավորված ազգերի կազմակերպության մուտքի թույլտվության */laissez-passer/* օգտագործումը, եթե դա թույլատրված է ՄԱԿ-ի կողմից, և ցանկացած այլ ճամփորդական փաստաթղթի օգտագործումը, որը հաստատվել է Հիմնադրամի կողմից Հիմնադրամի համար առաքելություն իրականացնող Պաշտոնյաների և փորձագետների համար:

## Հոդված 11

### Հարկերից ազատումը

1. Հիմնադրամը, նրա ակտիվները, գույքը, եկամուտը, նրա գործառնություններն ու գործարքները, ներառյալ ցանկացած գործունեություն և նախագիծ, որն իրականացվում է Հիմնադրամի կողմից Հայաստանի Հանրապետությանը ցուցաբերվող տեխնիկական աջակցության շրջանակներում, ազատվում են բոլոր հարկումներից և բոլոր մաքսատուրքերից: Հիմնադրամն ազատվում է նաև ցանկացած տեսակի հարկերի կամ տուրքի վճարման, պահման կամ գանձման պարտավորությունից:

2. Հիմնադրամի կողմից Պաշտոնյաներին և Հիմնադրամի համար առաքելություն իրականացնող փորձագետներին վճարվող աշխատավարձերից և վարձատրությունից հարկեր չեն գանձվում: Հայաստանի Հանրապետությանն իրավունք է վերապահված հարկելու Հայաստանի Հանրապետությունում բնակվող՝ Հիմնադրամի կողմից աշխատավարձ կամ այլ վարձատրություն ստացող Հայաստանի Հանրապետության քաղաքացիներին:



3. Կառավարությունը որևէ հարկ չի գանձի Հիմնադրամի որևէ պարտավորության կամ արժեթղթի, այդ թվում՝ դրանց ցանկացած շահաբաժնի կամ տոկոսների նկատմամբ՝ անկախ դրանց տնօրինողից,

(a) եթե դա խտրականություն է դնում այդ պարտավորության կամ արժեթղթի նկատմամբ միայն այն պատճառով, որ թողարկված է Հիմնադրամի կողմից, կամ՝

(b) եթե նման հարկման համար միակ իրավական հիմքը վայրն է կամ այն արժույթը, որով այն տրվում է, ենթակա է վճարման կամ վճարվում է, կամ Հիմնադրամի ցանկացած գրասենյակի գտնվելու կամ նրա կողմից իրականացվող գործունեության վայրը:

4. Հիմնադրամի կողմից երաշխավորված ցանկացած տեսակի պարտավորության կամ արժեթղթի, այդ թվում՝ դրանց ցանկացած շահաբաժնի կամ տոկոսների նկատմամբ՝ անկախ դրանց տնօրինողից, որևէ հարկ չի գանձվում.

(a) որը խտրականություն է դնում միայն Հիմնադրամի կողմից այդ պարտավորությունները կամ արժեթղթերը երաշխավորված լինելու պատճառով, կամ՝

(b) եթե նման հարկման համար միակ իրավական հիմքը Հիմնադրամի որևէ գրասենյակի գտնվելու կամ նրա կողմից իրականացվող գործունեության վայրն է:

## **Հոդված 12 Հրաժարում**

Հիմնադրամը կարող է իր հայեցողությամբ ցանկացած դեպքում կամ պահին, այնպիսի եղանակով և այնպիսի պայմաններով, որոնք կհամարի լավագույնս համապատասխանող Հիմնադրամի շահերին՝ հրաժարվել սույն Հիմնական Համաձայնագրով իրեն վերապահված ցանկացած արտոնությունից, անձեռնմխելիությունից և ազատումից, հաշվի առնելով, որ Հիմնադրամի համար առաքելություն իրականացնող Պաշտոնյաներին ու փորձագետներին այդ արտոնություններն ու անձեռնմխելիությունը տրվում են ոչ թե նրանց անձնական շահի համար, այլ Հիմնադրամի արդյունավետ գործունեության շահերից ելնելով: Հետևաբար, Հիմնադրամը ոչ միայն իրավունք ունի, այլև պարտավոր է հրաժարվել Հիմնադրամի համար առաքելություն իրականացնող Պաշտոնյաների ու փորձագետների անձեռնմխելիությունից ցանկացած դեպքում, երբ, Հիմնադրամի կարծիքով, ելնելով հանգամանքներից, այդ անձեռնմխելիությունը

կարող է խոչընդոտել արդարադատության իրականացմանը և, երբ, կախված հանգամանքներից, դրանից կարելի է հրաժարվել առանց վնաս հասցնելու այն նպատակին, որի համար տրվել է անձեռնմխելիությունը, կամ Հիմնադրամի շահերին:

### **Հոդված 13 Վեճերի կարգավորումը**

1. Սույն Հիմնական Համաձայնագրի կիրառման կամ մեկնաբանման վերաբերյալ ծագած ցանկացած վեճ պետք է լուծվի փոխադարձ խորհրդակցությունների և բանակցությունների միջոցով:

2. Սույն հոդվածի 1-ին կետին համապատասխան վեճերը բարեկամաբար չլուծելու դեպքում սույն Հիմնական Համաձայնագրի կիրառման կամ մեկնաբանման վերաբերյալ ցանկացած վեճ կարգավորվում է արբիտրաժային կարգով՝ Մշտական արբիտրաժային դատարանի (ՄԱԴ) 2012թ. կանոնների համաձայն և.

(a) արբիտրաժի անդամները պետք է լինեն երեքը,

(b) արբիտրաժի վայրը պետք է լինի ՄԱԴ-ի նստավայրը՝ Նիդերլանդներ, Հաագա,

(c) արբիտրաժի վարույթի ընթացքում օգտագործվող լեզուն անգլերենն է, և

(d) սույնով Կողմերը հրաժարվում են որևէ դատարանում կամ այլ իրավասու մարմնում ցանկացած տեսակի բողոք ներկայացնելու իրենց իրավունքից, այնքանով, որքանով նման հրաժարումը կարող է իրավաչափորեն կատարվել կիրառելի օրենքի համաձայն:

### **Հոդված 14 Եզրափակիչ դրույթներ**

1. Սույն Հիմնական Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում այն օրվանից, երբ Հիմնադրամի Գործադիր տնօրենը դիվանագիտական ուղիներով ստանում է Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության գրավոր ծանուցումը Հիմնական Համաձայնագրի ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերն ավարտելու մասին:

2. Սույն Հիմնական Համաձայնագրում լրացումները և փոփոխությունները պետք է կատարվեն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ և ձևակերպվեն առանձին արձանագրությունների միջոցով: Այդ արձանագրություններն ուժի մեջ են մտնում սույն հոդված 1-ին կետում նշված կարգով:

3. Սույն Հիմնական Համաձայնագրի գործողությունը կարող է դադարեցվել յուրաքանչյուր Կողմի՝ դիվանագիտական ուղիներով փոխանցված գրավոր ծանուցման միջոցով, որն ուժի մեջ կմտնի մյուս Կողմի կողմից այդ ծանուցումը ստացվելուց 12 (տասներկու) ամիս հետո:

4. Կառավարությունը և Հիմնադրամը կարող են ունենալ Ծրագրային փաստաթղթերով կարգավորվող հարաբերություններ, որոնք կարող են անհրաժեշտ լինել սույն Հիմնական Համաձայնագրի շրջանակներում: Սույն Հիմնական Համաձայնագրի գործողության դադարեցման դեպքում սույն Հիմնական Համաձայնագրի և Ծրագրային փաստաթղթերի համաձայն Կառավարության և/կամ Հիմնադրամի ստանձնած՝ Կողմերի իրավունքները և պարտավորությունները շարունակվում են մինչև այդ Ծրագրային փաստաթղթերի ժամկետների ավարտը:

Կատարված է Կարուիկո քաղաքում, 2018 թվականի դեկտեմբերի 11 -ին՝ երկու հավասարազոր բնօրինակով՝ անգլերեն և հայերեն լեզուներով: Տեքստերի միջև մեկնաբանության տարաձայնության դեպքում նախապատվությունը տրվում է անգլերեն տեքստին:

Հայաստանի Հանրապետության  
Կառավարության կողմից



Էրիկ Գրիգորյան  
բնապահպանության նախարարի  
պաշտոնակատար

Կանաչ կլիմայի հիմնադրամի  
կողմից



Խավիեր Մանզանարես  
Գործադիր տնօրենի  
պաշտոնակատար

**BASIC AGREEMENT**

**between**

**THE GOVERNMENT OF THE REPUBLIC OF ARMENIA**

**and**

**THE GREEN CLIMATE FUND**

The Government of the Republic of Armenia (“the Government”) and the Green Climate Fund (“Fund”) jointly referred to as “the Parties”;

*having regard* to the United Nations Framework Convention on Climate Change, adopted in New York on 9 May 1992 (“the Convention”) and the Governing Instrument for the Green Climate Fund (“the Governing Instrument”); and

*recognizing* the importance of ensuring privileges and immunities to the Fund and the persons associated with it in consistence with paragraphs 7 and 8 of the Governing Instrument;

*conscious* of the need to ensure effective implementation of the activities of the Fund in the Republic of Armenia;

**have agreed as follows:**

### **Article 1 Scope**

This Basic Agreement defines the status of the Fund and status of the persons associated with the Fund in the Republic of Armenia. It shall apply to all activities that the Fund may undertake in the Republic of Armenia. The Parties may conclude supplementary agreements to define that particulars of such activities and projects (hereinafter referred to as “Project Documents”). Any such Project Document concluded under this Basic Agreement shall not create other obligations under international law for the Government and the Fund and shall not contradict the terms and conditions of this Basic Agreement.

### **Article 2 Definitions**

For the purpose of the present Basic Agreement, the following definitions shall apply:

- (a) “Accountability Units” means the evaluation unit, the integrity unit and the redress mechanism established by the Board pursuant to the Governing Instrument;
- (b) “Archives of the Fund” means all records, correspondences, documents, manuscripts, still and moving pictures, films, sound recordings, computer or media data, and other digital and electronic records, or other compilations of data or other material, whether in machine-readable or other form, belonging to, or held by, the Fund;
- (c) “Board” means the Board of the Fund;
- (d) “Custom duties” means any duties, taxes or levies on items imported or exported by the Fund for official purposes, including vehicles, equipment, materials and supplies;

- (e) "Duty" means any excise duty or other levy on purchases of goods and services for official purposes;
- (f) "Executive Director" means the head of the Secretariat appointed by the Board;
- (g) "Expert performing missions for the Fund" means an expert or consultant providing services under contractual arrangements with the Fund (either between the expert and the Fund or between an entity and the Fund), including the Accountability Units and members of Board committees, panels and working groups;
- (h) "Observers" means the active observers invited to participate in Board meetings and any designated representative of an observer who has been accredited by the Fund;
- (i) "Officials" means the members and alternate members of the Board and their advisers, the Executive Director, the staff of the Secretariat and any other officers and employees of the Fund, including staff of the Accountability Units, irrespective of their nationality, with the exception of the persons recruited locally and assigned to hourly rates of pay;
- (j) "Property of the Fund" means assets, funds, income and rights belonging to, or held or administered by, the Fund;
- (k) "Secretariat" means the Secretariat of the Fund established by the Fund pursuant to the Governing Instrument; and
- (l) "Tax" means any direct or indirect tax, including any value-added tax and/or other similar tax.

### **Article 3 Legal Status**

1. The Fund shall possess full juridical personality and, in particular, full capacity to:
  - (a) Contract;
  - (b) Acquire, and dispose of, immovable and movable property; and
  - (c) Institute legal proceedings.
2. The premises of the Fund shall be inviolable. The Government shall ensure the protection of, and the provision of public services for the premises.

**Article 4**  
**Immunity from Judicial Proceedings**

1. The Fund shall enjoy immunity from every form of legal process, except in cases arising out of or in connection with the exercise of its powers to borrow money, to guarantee obligations or to buy and sell or underwrite the sale of securities, in which cases actions may be brought against the Fund in a court of competent jurisdiction in the territory of a country in which the Fund has its principal or a branch office, or has appointed an agent for the purpose of accepting service or notice of process, or has issued or guaranteed securities.
2. Notwithstanding the provisions of paragraph 1 of this Article, no action shall be brought against the Fund by the Government, or by any agency or instrumentality of the Republic of Armenia, or by any entity or person directly or indirectly acting for or deriving claims from the Republic of Armenia or from any agency or instrumentality of the Republic of Armenia.
3. The premises and Property of the Fund shall, wheresoever located and by whomsoever held, be immune from all forms of search, seizure, expropriation, attachment or execution before the delivery of final judgment against the Fund.

**Article 5**  
**Immunity of Assets**

Property and assets of the Fund, wheresoever located and by whomsoever held, shall be immune from search, requisition, confiscation, expropriation or any other form of taking or foreclosure by executive or legislative action.

**Article 6**  
**Immunity of Archives**

The archives of the Fund and in general, all documents and data, in whatever format, including electronic formats, belonging to it or held by it, shall be inviolable, wherever located.

**Article 7**  
**Freedom of Assets from Restrictions**

1. To the extent necessary to carry out the purpose and functions of the Fund effectively, and subject to the provisions of this Basic Agreement and the laws and regulations of the Republic of Armenia, all property and assets of the Fund shall be free from restrictions, regulations, controls and moratoria of any nature.

2. Subject to the laws and regulations of the Republic of Armenia, the Fund, without being restricted by financial controls, regulations or moratoria of any kind:
  - (a) May hold funds, gold or currency of any kind and operate accounts in any currency; and
  - (b) Shall be free to transfer its funds, gold or currency from one country to another or within any country, and convert any convertible currency held by it into any other convertible currency.
3. In exercising its rights under paragraph 1 of this Article, the Fund shall pay due regard to any representations made by the Government insofar as it is considered that effect can be given to such representations without detriment to the interests of the Fund.

#### **Article 8 Privileges for Communications**

Official communications of the Fund shall be accorded treatment no less favourable than that accorded to the official communications of international organizations present in the Republic of Armenia.

#### **Article 9 Immunities and Privileges of Officials**

1. Officials and Experts performing missions for the Fund:
  - (a) Shall be immune from legal process with respect to acts performed by them in their official capacity, except when the Fund waives the immunity;
  - (b) Where they are not nationals of the Republic of Armenia, shall be accorded the same treatment with respect to immigration requirements, alien registration requirements and national service obligations, and the same facilities as regards exchange regulations, as are accorded by the Government to the representatives, officials and employees of comparable rank of other international organizations; and
  - (c) Shall be granted the same treatment in respect of travelling facilities as is accorded by the Government to representatives, officials and employees of comparable rank of other international organizations.
2. In addition to the provisions set forth in paragraph 1 of this Article, members and alternate members of the Board and the Executive Director while exercising their functions and during the journey to and from the Republic of Armenia, shall enjoy immunity from personal arrest or detention and from seizure of personal baggage.



3. Observers and individuals not covered by paragraph 1 of this Article invited by the Fund to participate in conferences and meetings, shall, enjoy in respect of words spoken or written and all acts done by them in their capacity as invitees of the Fund, immunity from legal process of every kind.

#### **Article 10**

##### **Facilitation of Travel and Recognition of Travel Document**

1. The Government shall facilitate transit of movement, including through the expedited processing of applications of visas, where required and where the laws and regulations of the Republic of Armenia allow, for Officials and Experts performing missions for the Fund.
2. The Government shall facilitate the applications of visas of observers and other persons invited by the Fund, where required and where the laws and regulations of the Republic of Armenia allow, to participate in meetings or conferences organized by the Fund.
3. The Government shall recognize the use of the United Nations laissez-passer by the Officials of the Fund, if so authorized by the United Nations, and the use of any other travel document approved by the Fund for Officials and Experts performing missions for the Fund.

#### **Article 11**

##### **Exemption from Taxation**

1. The Fund, its assets, property, income, its operations and transactions, including any activity or project carried out by the Fund in the framework of the technical assistance provided to the Republic of Armenia, shall be exempt from all taxation and from all customs duties. The Fund shall also be exempt from any obligation for the payment, withholding or collection of any tax or duty.
2. No tax shall be levied on or in respect of salaries and emoluments paid by the Fund to Officials and Experts performing missions for the Fund. The Republic of Armenia reserves the right to tax the salaries and emoluments paid by the Fund to nationals of the Republic of Armenia who reside in the Republic of Armenia.
3. The Government shall not levy any tax on any obligation or security issued by the Fund, including any dividend or interest thereon, by whomsoever held:
  - (a) If it discriminates against such obligation or security solely because it is issued by the Fund; or

- (b) If the sole jurisdictional basis for such taxation is the place or currency in which it is issued, made payable or paid, or the location of any office or place of business maintained by the Fund.
4. No tax of any kind shall be levied on any obligation or security guaranteed by the Fund, including any dividend or interest thereon, by whomsoever held:
- (a) Which discriminates against such obligation or security solely because it is guaranteed by the Fund; or
  - (b) If the sole jurisdictional basis for such taxation is the location of any office or place of business maintained by the Fund.

#### **Article 12 Waiver**

The Fund, at its discretion, may waive any of the privileges, immunities and exemptions conferred under this Basic Agreement in any case or instance, in such manner and upon such conditions as it may determine to be appropriate in the best interests of the Fund, taking into account that privileges and immunities are accorded to Officials and Experts performing missions for the Fund, not for their personal benefit, but in the interest of the effective functioning of the Fund. Consequently, the Fund not only has the right but is under a duty to waive the immunity of Officials and Experts performing missions for the Fund, in any case where, in the opinion of the Fund, as the case may be, the immunity would impede the course of justice, and where it can be waived, without prejudice to the purpose for which the immunity is accorded or to the interests of the Fund, as the case may be.

#### **Article 13 Settlement of Disputes**

1. Any dispute regarding the application or interpretation of this Basic Agreement shall be resolved through mutual consultations and negotiations.
2. Should efforts to resolve disputes amicably under paragraph 1 of Article fail, any dispute regarding the application or interpretation of this Basic Agreement shall be settled by arbitration in accordance with the Permanent Court of Arbitration (PCA) Rules 2012 and:
  - (a) The number of arbitrators shall be three;
  - (b) The place of arbitration shall be The Hague, the Netherlands, at the seat of the PCA;
  - (c) The language to be used in the arbitral proceedings shall be English; and

- (d) The Parties hereby waive their right to any form of recourse against an award to any court or other competent authority, insofar as such waiver can validly be made under the applicable law.


**Article 14**  
**Final Provisions**

1. This Basic Agreement shall enter into force on the date of receiving the written notification from the Ministry of Foreign Affairs of the Republic of Armenia by the Executive Director of the Fund through diplomatic channels, of the completion of the internal procedures necessary for its entry into force.
2. Amendments and changes to this Basic Agreement shall be made upon mutual consent of the Parties and shall be defined in separate protocols. These protocols shall enter into force in the manner prescribed in paragraph 1 of this Article.
3. This Basic Agreement may be terminated by either Party upon written notification through diplomatic channels, being effective 12 (twelve) months after receipt of such notification by the other Party.
4. The Government and the Fund may enter into Project Documents as may be necessary within the scope of this Basic Agreement. In the event of termination of this Basic Agreement, the rights and responsibilities of the Parties undertaken by the Fund and/or the Government in accordance with the Project Documents, and under this Basic Agreement, shall continue until the end of the term of these Project Documents.

Done in Katowice on December 11, 2018 in duplicate each in the Armenian and English languages, all texts being equally authentic. In case of divergence of the interpretation between the texts, the English text shall prevail.

For the


**GOVERNMENT OF THE  
REPUBLIC OF ARMENIA**



**Mr. Erik GRIGORYAN**  
**Acting Minister of Nature Protection**

For the

**GREEN CLIMATE FUND**



**Javier MANZANARES**  
**Executive Director a.i**

Սույնով հավաստվում է, որ կցված տեքստը 2018թ. դեկտեմբերի 11-ին ստորագրված «Հայաստանի Հանրապետության կառավարության և Կանաչ կլիմայի հիմնադրամի միջև» հիմնական համաձայնագրի՝ Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության միջազգային պայմանագրերի պահոցում (դեպոզիտում) պահվող բնօրինակի նույնական պատճենն է:

**Հայաստանի Հանրապետության  
արտաքին գործերի նախարարության  
միջազգային պայմանագրերի և  
իրավունքի վարչության պետի պ/կ՝**



**Տիգրան Գալստյան**